

ԻՐԱՔ Կ'ԱՒԵԼՑՆԵ ԲԱՐԻԻԴԻ ԻՐ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ԼՈՆՏՈՆ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրաքի արտաքին գործերի նախարար Կոնստանտին Կասթրոն 28-րդ օրը 550 հազար տակառի յուսուկալի արտահանումը...

ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 L.Ռ. 73ԻԴ.ՏԱՐԻ, ԹԻԻ 19 (20482) ՀՈՐԵՔԱՐԹԻ, 29 ՄԱՐՏ 2000 10 ԷՁ

ՔՈՉԱՐԵԱՆ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ ՓՈՒԹԻՆԸ

ԵՐԵՒԱՆ, 28 (ԱՐՄԵՆՓՐԵՍ).- Հայաստանի նախագահ Ռուստի Քոչարեան երկ և հեռուստատեսության ոլորտում...

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՐԴԵԳՐԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՊ ՉՈՒՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ՀԵՏ

Վարչապետ Սեյիմ Հրո երկ կայտարարեց, որ տնտեսական վիճակի բարելավման կառավարությունը...

ՊԱՐԱՔ ԴԻՏՈՒՄՆԱԿՈՐ ԿԵՐՊՈՎ Կ'ԱՐԳԵԼԱԿԵ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳԱՄԱՍԿՈՍ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Սուրիոյ պաշտօնական մատուցելու Երեքշաբթի օր ամբաստանեց Բարաք Օբամայի վարչապետ Էնոու Պարաքը...

ՆԱԽԱԳԱՀ ԶՈՉԱՐԵԱՆԻ ԿՐԱՍՏԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՒ ԱՆՈՅԾ ՀԱՐՑ ԳՈՅՈՒԹԻՆ ԶՈՒՆԻ



Շեարտնած Մախազահ Զոչարեանը կը պատուէ ջըանշանով մը:

Հայաստանի եւ Վրաստանի նախագահներ Ռուստի Քոչարեան եւ Էդուարտ Շեարտնածը երկ Թիֆլիսի մէջ...

ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Երկ Երեքշաբթի, 28 Մարտին, «Երեւանեան» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ միջկուսակցական հանդիպում մը...

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՅՅԵԼԵՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ



Երկ առաւօտ, Արամ Ա. կաթողիկոս այցելեց Լիրանանի Հանրապետության նախագահ Գորգար Էմիլ Լահուտին...

ԹՈՒՐԿԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՄԱՅԻՍԻՆ ՊԻՏԻ ՎԱԿԵՐԱՅՆԵ ԿԱՍՊԵԱՆ ՔԱՐԻԻՂԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՇՈՒԿԱՆԵՐ ՓՈՒՍԴԻՐՈՂ ԿԱԶՄՏԱՐԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Թուրքիոյ խորհրդարանը Մայիսին հաւանաբար պիտի վաւերացնէ կասպեան քարիւղը արեւմտեան շուկաներ մղելու գծով...

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ «ՍԱՆՏԵՑ ԹԱՅՄՁ» ԹԻՐԻՒՆ ՀԱՄԱՂԱՅԻՆ

ՔԱՐԻԻՂԻ «ՊԻԹԻՇ ՓԵԹՐՈՂԻՈՒՄ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԱԼԻԵԼ ՀԱՍՑՈՒՑԱԾ Է ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

Բրիտանական «Սանտեյ Թայմզ» թերթին մէջ լույս տեսած յօդուածի մը համաձայն, բրիտանական «Պրիթի Փեթրոլիում» քարիւղի ընկերութիւնը...

ՓՈՒԹԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ ՌՈՒՍԵՐՈՒՆ

Ռուսիոյ նորընտիր նախագահ Վլատիմիր Փութին երկ միութեան կողմէն Երեքշաբթի օրը 550 հազար տակառի յուսուկալի արտահանումը...



Փութին կ'արտասանէ ճառ մը:

«Ճիշդը ամբողջովն, միանշանակ առաջ ընթացող միասնաբար լուծելու համար հայրենիքին դիմագրուած հարցերը»:

ԱՐԱՑԱԹ ԱՒԱՐՏԵՑ ԳԵՐՄԱՆԻԱ ԻՐ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

ՇԹՈՒԹԿԱՐԹ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաթ Արաֆատ Երեքշաբթի օր աւարտեց Գերմանիայ այցելութիւնը...

ՀԱՅ - ՌՈՒՍԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ՌԱԶՄԱՓՈՐՁԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

ԵՐԵՒԱՆ, 28 (ԱՐՄԵՆՓՐԵՍ).- Հայաստանի մէջ Երեքշաբթի օր սկսան ուսուցիչական հրամանատարական ռազմափորձերը:

ՊԱՅՈՒՄԵՆ ՈՒՍՏԻՒԹԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԱՇԱՐՈՒՄՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՅԱՏՈՒԿ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԱՆԳԱՆՔՈՒԹԻՒՆԸ

ԵՐԵՒԱՆ, 28 (ԱՐՄԵՆՓՐԵՍ).- 1992 - 99 թուականներու ընթացքին, ուժանիւթի մարդիկ մէջ շարժառուարներու ընտանիքները...

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Նախագահ Լահուտ կ'ընդունի Միջազգային Կարմիր Քաշի ներկայացուցիչը:

Հանրապետության նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երեկ ընդգծեց, որ խրախուսելու քանակը մեջ լիբանանցի գերիներու եւ պատանդներու արգելափակումը մնալը կ'աւելցնէ թշնամիին դէմ լիբանանցիներու պայքարը եւ կ'արագացնէ դիմադրելու վճռականութիւնը:

Նախագահ Լահուտ երեկ ընդունեց Միջազգային Կարմիր Քաշի Լիբանանի մէջ ներկայացուցիչ Հանրի Ֆուրիէին: Այս առիթով, ան դատաւարտեց նաեւ Կարմիր Քաշի Նախաքիցի կեդրոնի ռեփրէզէնտիւնը՝ նկատել տալով, որ այսպիսի արարքներ պարմանալի չեն, երբ Իսրայէլն է կանոնը ընողը, որովհետեւ անկիսա Մուսթաֆա Տիրանին իր նշանակեցումը առեւանգելէ ետք կայն ո'չ միայն կ'ենթարկէ բանտային ամէնէն տեղ տանջանքներուն, այլեւ նոյնիսկ մարդասիրական կարգապահութիւններուն կ'արգելակէ անոր հետ հանդիպում մը ունենալ:

Նախագահ Լահուտ երեկ ընդունեց նաեւ բանակի գաղտնի սպասարկութեան տնօրէն Կոր. Ռեւոն Ակարը, ինչպէս նաեւ «Մաֆիա» օրաթերթի խմբագիր Թալալ Սալմանը, որուն կ'ընկերակցէր թերթի հիմնադրութեան 26րդ տարեդարձին առիթով գումարուող խորհրդածողովին պատուիրակութիւն մը:

Շարք էջ 10

ԻՍՐԱԷԼԵԱՆ ԲՈՒՆԱՐԱՐՔՆԵՐԸ ԿԸ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԻՆ ՀԱՐԱԻՒ ՄԷԶ

Իսրայէլեան օդուժը երեկ կ'սորէ ետք յարձակումներ գործեց Մատրիցունէն դէպի արեւմուտք գտնուող շրջանի մը վրայ, իսկ հրետանին ուժեղացնեց Ասի, Քաֆ-Շար, Եաթիթ, Եաբաթ, Մատրից Սըլմ եւ Սյուքի շրջանները:

Հարաւի դիմադրութիւնը երեկ կ'սորէ առաջ ուժերակոծեց Պլաթի դիրքը:

Միւս կողմէ, իսրայէլեան ուժերը երեկ վերաբացին ընդհարումը գոտի Քաֆարթըպիթի անցքը: Անցքը փակ կ'ըմար շարժել մը ի վեր, դիմադրութեան հետ կատարուած գործողութեան պատճառով: Գործողութեան ատեն վիրաւորուած էին յատեան երկու զինեալներ:

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դ. «Ռուբին» ակումբի ընկերային յանձնախումբի կազմակերպած վիճակահանութիւնը յետաձգուած է 25 Մայիս 2000ին:

ՄԱՀԱԶԴ

- Տէր եւ տիկին տղթ. Ատամ Իտ եւ գաւակունք
- Տէր եւ տիկին Մուսթաֆա Իտ եւ գաւակունք
- Աթէֆ եւ էլիս Իտ
- Տիկին Իմթիսէյ Նեպուլ եւ գաւակունք
- Տէր եւ տիկին Հապիպ Իտ եւ գաւակունք
- Տէր եւ տիկին Ղասսան Չուէյն եւ գաւակունք
- Օրդ. Ատմա Իտ
- Էլիսա եւ էտիպ Իտ
- Տէր եւ տիկին Իպրահիմ Իտ եւ գաւակունք
- Նուզհա Հաննա եւ Ռամզի Ապտալա
- Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր եւ քրոջ

ՌԱՀԻՖԵ ԻՏԻ

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 26 Մարտ 2000ին: Յուդարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երեքշաբթի, 28 Մարտ, կ'սորէ ետք ժամը 1:00ին, յուն ուղղափառներու Մար Ճիորճիոս եկեղեցւոյ մէջ, ուրկէ հնգուցեային մարմին փոխադրուեցաւ Իտպիլ, Աքբար:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեային բնակարանը, Ժընէյոէ, «Աղհար» շէնք, Շաբաթ 1 եւ Կիրակի 2 Ապրիլին:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Ստեփան Թաւուքեան եւ գաւակունք
Տէր եւ տիկին Գրիգոր Թաւուքեան եւ գաւակունք
Տէր եւ տիկին Սարգիս Նուրեան եւ գաւակունք
Տէր եւ տիկին Յարութիւն Մարտապեան եւ գաւակունք
Պօղոս եւ Հերմինէ Մարտապեան
Տիկին Աղանի Մենկիշեան եւ գաւակունք
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, քրոջ, մեծ մօր եւ Հարապտին

ԱԶՍՈՒՀԻ ԹԱԻՈՒԾԵԱՆԻ (ՇՆԵԱՂ՝ ՄԱՐՍՈՒՊԵԱՆ)

անակնկալ մահը, որ պատահեցաւ Մ. Նահանգներու մէջ, Մերիլենտ, 16 Մարտ 2000ին: Յուդարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ 23 Մարտին, Մերիլենտի մէջ:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին իր գաւակին Ստեփան Թաւուքեանի բնակարանը, Նաքբաշ, Երեքշաբթի 28 եւ Չորեքշաբթի 29 Մարտին:

ՉԻՆԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ ՄԱՀՍԻՆ ԼԻԲԱՆԱՆ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրրիի երկ կ'ընդունեց ֆրանսիացիները: Կիրակի Էտ Գործակցութեան հարցերու Ֆրանսիայի նախարար Շարլ Ժոսէֆը, որ տեսակցութեան է ետք, աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարար Միշէլ Մուսայի հետ այցելեց լուսանկարներու ցուցահանդէսը, որուն ժամը նախանցեալ օր կատարուած էր խորհրդարանին մէջ, ներկայացնելու իսրայէլեան բռնարարները: Ժոսէֆը ցաւ յայտնեց վայրագութեանց գոհերուն համար:

Պրրիի նաեւ ընդունեց Չինաստանի դեսպան Լիու Շանթանկը, որ յայտարարեց, թէ Մայիսին պաշտօնակատար այցելութեան մը համար Լիբանան պիտի մասնակցատուիրակութիւն մը, զիբաւորութեամբ Չինաստանի խորհրդարանի փոխ նախագահին: Աննախորհրդարանի դեսպանը վերահաստատեց Չինաստանի անվերապահ գորակցութիւնը Լիբանանի եւ անոր բռնարարները հողի ազատագրութեան կողմէ: Չինաստանի նախարարները նախապայմանի հետեւանալու Լիբանանէն:

Պրրիի ապա զիբաւորեց «Ազատագրում եւ Բարգաւաճում» երեսփոխանա-

կան պլոքի ժողովին, որուն ներկայ գտնուեցան նախարարներ Ղազի Չալաթի եւ Միշէլ Մուսա:

Երեսփոխան Ահմէտ Սուէլտի ժողովին ետք կարգաւ հաղորդագրութիւն մը, որ կ'ըսէ, թէ պլոքը քննարկած է կառավարութեան հարցաքննութեան յատկացուած խորհրդարանական ժողովին կապուած հարցեր: Ժողովին նաեւ անդադարձաւ երկտրականութեան պատասխանատուներուն կողմէ հարաւի պարտադրուած խաւարին, որ առարկայական ոչ մէկ պատճառներով եւ մեծ վնասներ կը պատճառէ շրջանին, իսկ պլոքի նախարարներուն յանձնարարութեանց աջ կամակարգութիւնը արծարծել կառավարութեան վաղուան (այսօրուան) ժողովին, ըսաւ հաղորդագրութիւնը:

ԻՏԱԼԻԱ ՅԱՆՉՆԱՌՈՒ Է ՊԱՀԵԼՈՒ ՀԱՐԱՄԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ԻՐ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԻՍՐԱԷԼԵԱՆ ՈՒՇԵՐՈՒ ՀԵՌԱՅՈՒՄԵՆ ԵՏՔ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԻՏԱԼԻԱՅ ԴԵՍՊԱՆԸ

Իտալիոյ դեսպան Ճիուզեֆի Գալիերի երկ կ'արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Չուէլլո շամտանի հետ տեսակցելէ ետք յայտարարեց, որ Իտալիոյ յանձնարում է պահելու հարաւային Լիբանանի մէջ իր ներկայութիւնը իսրայէլեան ուժերու հետեւանալէ ետք, որովհետեւ պատրաստ է մաս կազմելու այն ուժերուն, որոնք հին պիտի լինան Ֆրանսիայի գործընկերներուն հետ:

Դեսպանը յայտնեց, թէ շամտանի հետ քննարկած է ժրմեի գերատեսիճանին յաջողող հանգրուանի հաւանական բոլոր «սեւաթիւ»ները, որոնք բոլորն ալ մտայն են, եւ հաւանական էր Իտալիոյ վերադառնալու արտի տիրէ մինչեւ ամբողջութեամբ նախագահական ընտրութիւններու աւարտը:

ԽԱՀԱՀՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՅԵՏԱԶԳՈՒԱԾ ԵՆ ՄԻՆՉԵՒ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԸՈՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՊԱՇՏՕՆԻ ՍՏԱՆՁՆՈՒՄԸ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՀԸՁՄԱԼԱՅԻ ՓՈԽ ԸՆԿՆԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

Հրգպայայտի փոխ ընդհանուր քարտուղար շէյխ Նայիմ Քասէմ ըսաւ, որ զի կ'սորէ ընթացքը նախարարաց յոյս կու տար, թէ ժրմեի գերատեսիճանը պիտի ձայնողի այն իմաստով, որ անոր աւարտին Սուրիա-Իսրայէլ բանակցութիւններու վերսկսում պիտի չյայտարարուի:

Այս ձայնողութեան պատճառը այն է, որ Իտալիոյ կը մերժէ ընդառաջել Սուրիոյ պահանջներուն, որոնցմէ զիբաւորն է Կոյունէն հետեւանալու մինչեւ 4 Յունիս 1987ի սահմաններ, ըսաւ ան Իրանի պետական լրատու գործակալութեան տր. ած հարցազրույցի մը մէջ: Ան աւելցուց, թէ իսրայէլեան բանակցութիւնները սկսած են մտնել սառնարան, եւ Հոն պիտի մնան նախագահ Պիլ Քլինթոնի պաշտօնավարութեան աւարտին մինչեւ անոր յաջողութիւն:

- 1700ամեակի, Ս. Զատիկի եւ Ապրիլի 24ի առիթներով ուխտագնացութիւնը շրջապատյոյ
- 21-24 Ապրիլ Շաբաթ-Տրիշ 29: Սարգիս Կարապետ 1995
- 21-24 Ապրիլ Կիպրոս 2355:
- 21-26 Ապրիլ Կիպրոս-Օրդ Մայիս-Չաւիթի 4655:
- 21-28 Ապրիլ Երեւան 4755:
- 28 Ապրիլ-1 Մայիս Կիպրոս 2355:

ՄԱՀԱԶԴ

Սուլթան Պէքրի ճեան Պարգեւ Պէքրի ճեան վազգէն Պէքրի ճեան եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց եղբոր եւ Հարապատին

ԵՂԻՇԷ ՊԵՔԵՐԷՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 27 Մարտ 2000, երեկոյեան ժամը 9:00ին, իր բնակարանին մէջ: Թաղման արարողութիւնը կատարուեցաւ Երեքշաբթի, 28 Մարտ, կ'սորէ ետք ժամը 4:00ին, Ֆրոն Շրպպի Ազգային գերեզմանատան մատրան մէջ:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեային բնակարանը, Չորեքշաբթի 29 եւ Հինգշաբթի 30 Մարտին:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԼԻԱԳՈՒՍԱՐԻՆ

ԵՐԵՍՓՈՒՍԱՆՆԵՐԸ ԱՅՍՕՐ ԿԸ ՀԱՐՅԱՔՆԵՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ



Պրրի կը նախագահէ խորհրդարանի դիւանի ժողովին:

Խորհրդարանի դիւանը երեկ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրրիի գլխաւորութեամբ գումարած իր ժողովին քննարկեց կառավարութեան հարցաքննութեան յատկացումը եւ այսօր սկսող խորհրդարանի լիազուարներու վերաբերող հարցեր:

Ժողովին ետք, խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆըրպի յայտարարեց, թէ ժողովները ուղղակիօրէն պիտի պատկերասփռուին: Կառավարութիւնը հարցաքննող իւրաքանչիւր երեսփոխանի պիտի տրուի 10 վայրկեան եւ նոյնքան ժամանակ պիտի տրուի կառավարութեան՝ պատասխանելու:

Հարցումի մը պատասխանելով, Ֆըրպի անհաւանական նկատեց, որ այս ժողովներուն կառավարութեան հանդէպ վստահութեան քուէի հարց ծագի: Ան նաեւ հաստատեց, որ խորհրդարանը մօտ օրէն պիտի գումարէ օրէնսդրական նիստ մը:

ՔԱՐԻԻԶԻ «ՊՐԻԹԻՇ ՓԵԹՐՈԼԻՈՒՄ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԱԼԻԵԻԸ...

Շարու Բակուած Ա. Էջէի

«Պի. Փի.» սակայն կը հերքէ այս բոլոր լուրերը, որոնք շփոթի կրնան մատնել Լորտ Հայալըրը, որ վարչապետ Թոնի Պլէրի կառավարութեան առեւտրի նախկին նախարարն էր եւ պետական հարուածի շրջանին «Պի. Փի.» գործադիր տնօրէնը:

Փաստաթուղթին մէջ, թուրք լրտեսը կը նշէ, որ ինք ներկայ գտնուած է կարգ մը հանդիպումներու, որոնց մասնակցած են նաեւ «Պի. Փի.» «Էքսօն», «Անոքո», «Մոպիլ» եւ թրքական քարիւղի ընկերութիւններու ներկայացուցիչներ: «Քարիւղի այս ընկերութիւնները նախագահին եւ վարչապետին առաջադրեցին իրենց օժանդակութիւնը Հայաստանի դէմ Արաբիանի պատերազմին», կը նշէ թուրք լրտեսը՝ նշելով, թէ «Պի. Փի.»-ին կողմէ հանդիպումին կը մասնակցէր Թերի Արամպ անունով ան մը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՐԴԵԳՐԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ...

Շարու Բակուած Ա. Էջէի

Վարչապետը նկատել տուաւ, որ երկրին դրամական վիճակին բարելաւման հնգամեայ ծրագիրը տակաւին գործադրութեան ընթացքի մէջ է: Ան նաեւ յայտնեց, որ կառավարութիւնը կը պատրաստէ արժէքի յաւելման տուրք (VAT) հաստատելու օրինագիծ մը, գոր պիտի ներկայացնէ խորհրդարանին, որպէսզի կարելի դառնայ մաքսատուրքերու աստիճանական նուազումը, Եւրոպայի Հաստատութիւնը կը պատրաստէ հետ գործակցութեան եւ համակարգումի ամրապնդման նպատակով:

Տնտեսական եւ դրամական բնագաւառները աւելի եւս պիտի ամրապնդուին, շնորհիւ կառավարութեան ծրագրած ապապետականացումի գործադրութեան, ըսաւ ան:

ՀՍԿՈՒՄԻ ՇԱԲԱԹ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Ս. Գրիգոր Լուսաւորչի Մուտն ի Վիբապ օսնից եւ Անթիլիասի մայրավանքի ՌԻՍՏ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՒՆԱԿԱՆ ԿԱՐՈՒԹԻՒՆԸ խորհրդարանի նախագահի շաբաթ. 3 Էջէի 7 Ապրիլի միջոցին: Ամէն երեկոյ ժամը 5:00ին, Ս. Գրիգոր Լուսաւորչի Մայր տաճարին մէջ նկատմի ժամերգութիւն տեղի պիտի ունենայ եւ ժամերգութեան ետք միաբան հարիւր հոգեւոր խորհրդածութիւններ պիտի կատարեն քրիստոնէական եկեղեցւոյ կեանքին կապուած շարք մը կենսական երեւոյթներու մասին, հետեւեալ կարգով.

- Յուսիկ արգ. Մարտիրոսեան՝ «ՀԱՄԱՏ»
- Երկուշաբթի. 3 Ապրիլ Ներսէս արգ. Մերեանեան՝ «ՅՈՅՍ»
- Երեքշաբթի. 4 Ապրիլ Վարպ արգ. Թօփալեան՝ «ՍԷՐ»
- Չորեքշաբթի. 5 Ապրիլ Սիփան արգ. Գէյեհեան՝ «ՄԵՐԳ»
- Հինգշաբթի, 6 Ապրիլ Մասիս արգ. Զօյուլեան՝ «ԱՂՍԹԳ»
- Ուրբաթ. 7 Ապրիլ

Սիրով կը հրակոչուին հաւատացեալները հոգեկան յանգիստ տրուելու, որպէսզի առաւել քիտակցութեամբ ապրին եւ արժեւորեն ՌԻՍՏ ԵՐԵՎԱՆԻ իմաստը իրենց կեանքին մէջ եւ նորագաւ հաւատքով մասնակցին Ս. ԳՐԻԳՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՌՁԻ ԵՆ ԱՐԵՎԱԿԱՆ ՄԱՍՆԵՐՆԵՐՈՒ ԲՈՒՐՈՒՆԻ, Կիրակի, 9 Ապրիլին:

STUDIO **Lantern**

● Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ

Հեռ. 01-266866
Եւ 03-695399

ՄԱՐԴԱՅԻՆ ԻՐԱԲԱՆՑ ԵՐՈՊԱԿԱՆ ԱՏԵԱՆԸ ՎԵՐՍՏԻՆ ԼՈՒՍԱՐՁԱԿԻ ՏԱԿ Կ'ԱՌՆԷ ԹՈՒՐԵՒՈՅ ՄԱՐԴԱՅԻՆ ԻՐԱԲԱՆՑ ՄԱՐԶԸ

Մարդկային իրաւանց Եւրոպական Ատենանք երկ կ ղատապարտեց Թուրքիան, որ 1993ին չէ կանխարգիլած եւ ապա լրջօրէն քրննուեցին չէ տարած երկու քիւրտերուն թղթակիցի մը եւ թիշի կի մը սպանութեան հարցին շուրջ:

Ատենանք վճիռը յայտուեց, թէ Թուրքիոյ կեցողութեան քրննարարած է մարդոց կեանքը պաշտպանելու անոր յանձնառութիւնը՝ համաձայն Մարդկային իրաւանց Եւրոպական Ուխտին:

Թղթակից Քեմալ Քիլիչ աշխատանքին տուն վերադարձի ճամբուն վրայ գինեւալներու կողմէ սպանուած էր, մինչդեռ ան երկու ամիս առաջ իշխանութիւններէն պաշտպանութիւն ուզած էր իր թերթին՝ «Էօզկիլըր Վիլնետեմ»ի անձնակազմին դէմ ուղղուած սպանալիքներէն ետք:

Բոլիշէ Հասան Քայա, որ կ'ենթադրուէր, թէ ՔԱԿԻ հետ կապեր ունեցած է, սպանուած գտնուած էր: Անոր դիակը չարչարանքներու հետքեր կր կրէր:

Եւրոպական ատենանք Անգարայի հրահանգեցիւրաբաններուն վճարել ղատարանային ծախսերը եւ 17,500 սթերլին վնասուց հատուցում:

Այս ամսուան սկիզբը ատենանք Անգարան ղատապարտած էր, որովհետեւ անիկա խօսքի ազատութիւնը չէր պահպանած երկրին մէջ՝ վերոնշեալ թերթի (այժմ փակուած) անձնակազմը պաշտպանելով: Քիլիչ մէկն էր թերթի թղթակիցներէն, որոնք 1990ական թուականներու սկիզբներուն սպանուած էին:

ԱՔԻՆ ՊԵՐՏԱՒԱՆՑ ԿԸ ՎԵՐԱԳՈՒՆԵԱՅ

Միւս կողմէ, Թուրքիոյ մարդկային իրաւանց հանրածանօթ պաշտպան Աքին Պիրտայ, որ երկու տարի առաջ ծանրօրէն վիրաւորուած էր գինեւալներու կողմէ, երկէ Անգարայի մէկ բանտը վերադարձաւ՝ արգելափակման մնացեալ վեց ամիսները աւարտելու համար՝ առողջական պատճառներով կարճ ժամանակով ազատ արձակուելէ:

ՏԵՄԻՐԷԼԻ ՊԱՇՏՕՆԱՎՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՀՄԱՐ

ԷՃԵԻՏ ՊԻՏԻ ՅԱԶՈՂԻ՞ ԱՊԱՀՈՎԵԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ 367 ՔՈՒԷՆ

ԱՆԳԱՐԱ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրքիոյ ընդդիմադիր իսլամական կուսակցութիւնը Երեքշաբթի օր մերժեց իր կեցողութեան փոփոխութեան հետ իր սակարկութիւններուն ընթացքին, ինչ կը վերաբերի նախագահ Սուլէյման Տեմիրլիի երկրորդ նստաշրջան մը պաշտօնավարելու հարցին:

Վարչապետ Պիլիշնիմ Էճեմիտ կ'ուզէ ապահովել սահմանադրական փոփոխութիւն մը, որ առիթ պիտի տայ Տեմիրլիի յաւելեալ 5 տարուան համար նախագահ մնալու, այս ձեւով կանխարգիլելով յաջորդի մը գծով կառավարական ընկերակցութեան անդամներուն միջեւ երկփեղկոց բանավէճեր ու անհամաձայնութիւն:

Սահմանադրական փոփոխութեան հարցով քուէարկութեան առաջին նիստ մը տեղի պիտի ունենայ Զորքշաբթի օր (այսօր): Սակայն տակաւին Երեքշաբթի օր անորոշ կը մնար, թէ կառավարութիւնը պիտի կարենա՞յ 387 քուէ ապահովել առաջարկը վաւերացնել տալու համար:

Իսլամական Առաքինութիւն կուսակցութիւնը առաջարկած սահմանադրական երեք փոփոխութիւններու կողքին, այլ փոփոխութիւն մը եւս կը պահանջէ: Անիկա կ'ուզէ, որ խոռովութիւններ յառաջացուցած ըլլալու յանցանքով քաղաքական գործունէութեան արգիլման որոշումը ջնջուի: Ասիկա առիթ պիտի տայ իսլամական ղեկավար եւ նախկին վարչապետ Նէճմէտտին Էրպաքանի, որ քաղաքական կեանքի վերադառնայ:

Սակայն ասիկա նաեւ պիտի զայրացնէ բանակը, որ լուսարձակներէ հեռու թրքական քաղաքական կեանքին մէջ մեծ ուժ մըն է:

ՌՈՒՍԱԿԱՆ ՏՈՒՄԱՆ ԱՅՍՕՐ ԿԸ ՔՆԵԱՐԿԷ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԱՆՁԵՌՆԵՐԸ ԴԱՐՁՆՈՂ ՓՈՒԹԻՆԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ՄՈՍԿՈՒՄ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուս բարձրաստիճան խորհրդարանականներ Երեքշաբթի օր համաձայնեցան խորհրդարանին մէջ քննարկումի ժամանակացոյց մը ճշդել՝ նախագահի պաշտօնակատար (ներկայիս նախագահ) Վլատիմիր Փութինի մէկ հրամանագրին գծով, որ իր նախորդը եւ անոր ընտանիքը անձեռնմխելի կը դարձնէ:

Պետական Տուձայի խորհուրդը քննարկումը ճշդեց Զորքշաբթի օրուան (այսօր) համար: Սակայն խորհրդարանին Օրէնսդիր Յանձնախումբի նախագահ Փաւէլ Քրաչենինի խոսքէն, որ երեսփոխանները պիտի մերժեն ընդունիլ, թէ Փութինի Նոր Տարուան նախօրեակին արձակած հրամանագիրը ոչ սահմանադրական է:

Փութին հրամանագիրը արձակած էր Ելցինի կողմէ նախագահի պաշտօնակատար նշանակուելէ քանի մը ժամ ետք:

Անիկա կը վերաբերէր ապագայ նախկին նախագահներու, որոնց կարգին՝ Ելցին, եւ ո՛չ անձնապէս Ելցինի: Ըստ հրամանագրին, նախկին նախագահները պիտի ստանան իրենց վերջին ամսականին 75 առ հարիւրի համապատասխանող թոշակ մը:

Զորքշաբթի օրուան քննարկումը կը վերաբերի յատկապէս համայնապար Կուսակցութեան կողմէ Սահմանադրական ատենանքի ընդունած կոչի մը, որ կ'ըսէ, թէ պէտք է հրահանգը ապօրինի նկատել:

ՔԱՍԱԼ ԽԱՐԱԶԻ ՊԱՀՐԷՅՆ Կ'ԱՅՅԵԼԷ

ՄԱՆԱՍԱ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրանի արտաքին գործոց նախարար Էմաթ Մարագի երկօրեայ պաշտօնակազմելու ժամանակ մը համար Պահրէյն ժամանեց Երեքշաբթի օր:

Մոնիթորինգ գործակալութիւնը հաղորդեց, որ Մարագի Պահրէյն կ'այցելէ ընդառաջելով իր պաշտօնակազմելու շէյխ Մոհամէտ Պըն Մուպարաք Մալիֆայի հրաւերին: Մարագի տեսակցութիւններ պիտի ունենայ պահրէյնցի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ, ինչպէս նաեւ՝ պիտի մասնակցի պահրէյնցի զինուորական քաղաքական միացեալ յանձնարարի մը ժողովին:

ՎԱՆԱՅ ՉԱՅՆ

Այսօր՝ Զորքշաբթի, 29 Մարտ 2000, կէսօրէ ետք ժամը 15:00ին:

ՀԱՐՅԱԶՐՈՅՑ

Լիբանանի վալքի նախկին պիտիան եւ Հայ Սե Գօսիներու Միջազգային Ակադեմիայի Aerobics բաժանմունքի մարզիչ՝ **ՂԱՍԱ ՇԻՒԱ ՀԻԻ ԲԵՏ**
Կը ներկայացնէ՝ **ՀԱՆԱ ՀԱՍՏՍՏ**


ՆԵԹԱՆԻՎՉՈՒ ԿՐՆԱՅ ԿԱՀԱՌԱԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԶԵՂԾԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՆՅԱՆՔՆԵՐՈՎ ԱՄՐԱՍԱՆՈՒԻԼ

ԵՐՈՒՍԱՂԵՄ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Իսրայէլի սուրիականութիւնը Երեքշաբթի օր պահանջեց, որ նախկին վարչապետ Պենիամին Նեթանիահուի եւ անոր կնոջ դէմ կաշառակերութեան ամբաստանութիւններ ուղղուին: Եթէ արդարութեան մարզի իշխանութիւնները հաւանութիւն տան, Նեթանիահու պիտի ամբաստանուի կաշառակերութեան, վեղծարարութեան եւ արդարադատութեան գործընթացը արգելակելու յանցանքով, յայտնեց սուրիականութիւնը: Իսկ կինը կըրնայ ամբաստանուիլ գողութեան եւ վեղծարարութեան փորձ կատարելու յանցանքով:


Նեթանիահուի գրասենեակը յայտարարեց, որ բոլոր ամբաստանութիւնները անհիմն են: Սուրիականութիւնը եօթը ամիսէ ի վեր քննութիւն բացած է Նեթանիահու ամուսին մասին: Քննութեան արդիւնքին համաձայն, նախկին վարչապետն ու կինը կաշառք ստացած են, ինչպէս նաեւ՝ պաշտօնակազմի նուէրներ իւրացուցած են: Իսրայէլի օրէնքը կը պահանջէ, որ վարչապետը պետութեան յանձնէ իր իշխանութեան օրերուն ստացած նուէրները: Եթէ ամբաստանութիւնները հաստատուին դատավարութեան մը ընթացքին, Նեթանիահու մինչեւ 18 տարի բանտարկութեան կրնայ դատապարտուիլ, իսկ կինը՝ վեց տարի:

ԱՅՍՕՐ ՎԱՆԱՅ ՉԱՅՆԷՆ

- Ժամը 9:00ին
«ԱՅԼԱԶԱՆՈՒԹԻՒՆ»
Կը պատրաստէ եւ կը ներկայացնէ Շողեր Գառնէշեան
- Ժամը 11:00ին
«ԿՆՂՁԱԿԱՆ»
Օրուան հիւրը՝ Փաքալ Գապէլեան
Կը ներկայացնէ Մարալ Հարպոյեան
- Ժամը 16:00ին
«ՅՈՒՇԱՍՏԵԱՆ»
Նուիրում՝ Վահան Թէքեանի
Կը պատրաստէ եւ կը ներկայացնէ Սոնիա Քիլեհեան
- Ժամը 17:30ին
«ԿԻՆԵՐ»
Օրուան հիւրը՝ Տիկի Շաղիկ Մկրտիչեան
Կը ներկայացնէ Մարալ Հարպոյեան
- Ժամը 16:00ին
«BEATLES»-Ի ՊԱՍՏՈՒԹԻՒՆ
Կը պատրաստէ եւ կը ներկայացնէ Հեթի Դաիթեան
- Ժամը 19:00ին
«ՈՎ ԵՄ ԵՍ»
Հեռաձայնային խաղ մրցում
Լուսիկին Բետ



The best days of Beirut? Still to come.



Good times are spent with friends, attending elegant receptions or chatting over a coffee while the international scene goes by. You'll soon be able to share moments of pleasure in the Spa, relax in the swimming pool and choose from an artist's palette of different cuisines, too. Where? At the Phoenicia Inter-Continental. Come and be part of the scene.

Re-Opening on March 22nd 2000

One World. One Hotel.
Uniquely Inter-Continental.

**PHOENICIA
INTER-CONTINENTAL
BEIRUT**

Minet El Houn, Beirut, Lebanon, P.O.Box 11/846,
Telephone: (961 1) 369100, Fax: (961 1) 369101
E-mail Address: phoenicia@interconti.com

ՎԱՆԱՅ ՉԱՅՆ

ՉՈՐԵՔԸ ԱՐԹԻՒՆ ՕՐՈՒԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

F	6:30 - Բացում
M	6:35 - Բարի լույս
M	7:00 - Հայկական եւ օտար մեղմ երգեր
9	8:00 - Օրուան յայտագիրի ընթերցում
4	8:15 - Տեղական մամուլի խորագիրներու ընթերցում
7	8:30 - Հայերէն յուրեր
7	8:40 - Օրերելոյթ
7	8:45 - Ինչ կ'ըսեն աստղերը
M	9:00 - Ալլապանութիւն
6	9:30 - Թոնիչք
2	10:00 - Սակարան
2	10:30 - Արաբերէն յուրեր
2	10:45 - Արաբերէն երգեր
3	11:00 - Կնոջական
3	11:30 - Ա. Մեսչեան
4	12:00 - Շահանդուխտի հետ
4	12:15 - Արա Գեորգեան
1	12:30 - Հայերէն յուրեր
2	13:00 - Սակարան
7	13:05 - Յեղափոխական յիշատակարան
2	13:10 - Ազգային յեղափոխական երգեր
1	14:30 - Արաբերէն յուրեր
1	15:00 - Արաբերէն յայտագիր
1	16:00 - Յուշամատեն
2	16:30 - Արաբերէն յուրեր
4	16:40 - Հանդիպում
4	17:30 - Կիներ
1	18:00 - Beatlesh պատմութիւն
1	18:30 - Հայերէն յուրեր
9	18:40 - Ուաշինկթընի պէկուցում
9	19:00 - Խաղ մրցում
9	20:30 - Ըստարատային
9	22:30 - Պատուեր
9	00:30 - Փակում

ՓՎԱԿՈՒՂԻ

Պատմութեան մէջ տասը տարին ակնբարբ է. իսկ մարդու կեանքում պատմութիւն: Տասը տարուան ընթացքում երկիր չի կառուցուում. եւ ազգ չի առաքանուում, բայց կարող է երկիր կործանուել եւ ազգ տրոհուել:

Իսկ ազգը ժողովուրդն է. սովորական մարդիկ, որոնք ապրում են կեանքի սովորական չափանիշներով, հասարակութեան մէջ արմատաւորուած ւանդոյթներով: Դառն իրադարձութիւններով յազեցած վերջին տասնամեակը հայ ժողովուրդը կարողացաւ յաղթահարել հինգ այդ արմատաւորուած ւանդոյթներ շնորհիւ: Անբեռնակալելի զրկանքներով յաղթահարեց երկրաշարժը եւ արցախեան պատերազմը: Դիմացաւ եւ յաղթեց, որովհետեւ վերջին հողակտորի կռիւ էր. գոյատեւման պայքար էր, յոյս ու հաւատ կար, վաղուայ օրուան հեռանկար էր տեսնոււմ: Չգիտէր. սակայն, որ իր իշխանաւորները դուրսպրծուլ չտեսներ են. երկիրը ծախող գաղափարական սնանկուրիւններ:

Պատերազմն ու երկրաշարժը ժողովուրդը չափեց, դիտեց որպէս իր բախտի անբաժանելի մաս: Բայց Լեւոնին եւ իր չարագործ խմբաւորման անձիւն, ատեց այն իշխանաւորներին, որոնք մարտնչող ժողովրդի թիկունքում դժոխք ստեղծեցին: Իսկ մի թէ կուլում այսքան զոհ տուեցինը. որ երկիրը բաժան - բաժան արուի իշխանաւորների եւ իրենց մերձաւորների միջեւ, մի թէ այսքան զրկանքներ կրեցինք եւ դիմացանք, որ երկիրը մաս առ մաս ծախուի օտարներին, մի թէ պատմութիւնից ոչ մի դաս չի քաղել այս ժողովուրդը. որը հոտի 90 առ հարիւրն է կորցրել հենց իշխանաւորների ազահութեան. ետասիրութեան եւ փառամոլութեան պատճառով, մի թէ փողն է դարձել փրկութեան միակ փարոսը, եւ չունեցողը դատապարտուած է անելութեան:

Քաղաքական անհատներեան, ազգային մտածողութեան բացակայութեան, ամենաբողոքեան, անարդարութեան մղձաւանք է Դայաստանը: Վստահութեան եւ խղճի սով է Դայաստանում: Դրանում ամեն օր համոզուում է սովորական հայ մարդը միակ փրկութիւն համարելով այս մղձաւանքից փախչելը: Մեր կեանքի տարբեր ուղորտներից բերուող օրինակները եզակի չեն, դրանք արդէն տասնամեայ խոցեր են մեր ժողովրդի մարմնի վրայ: Իսկ բոլորի հիւանդութիւնը նոյնն է «փողային սակաւարիւնութիւն»:

Երկու տարի առաջ կնոջս ընկերուիւո 18ամեայ որդին մեծ ռզեւորութեամբ բանակ մեկնեց եւ լաւ էլ ծառայում էր: Բայց բանակում նրա առաջին տեսանք անարդարութիւնն ու դաժանութիւնն էր: Սեփական քմահաճոյքով ղեկավարուող հրամանատարը դաժանօրէն ծեծում է իր հետ ծառայող ընկերոջը եւ արժանապատուութիւնը չկորցրած պատանին նետուում է պաշտպանելու նրան: Նման «անհնազանդութեան եւ լիտիութեան» համար մօտից պահանջում են 1000 տոլար, որ չդատեն տղային: Իսկ մայրը փող չունէր: Եւ տղան յայտնուում է բանտում:

Այսօրուան Դայաստանում հիւանդանալը ոչ միայն տնքանդուութիւն է, այլ եւ մի քանի մոր հիւանդութիւնների աւելացում, եթէ փող չունեն: Առողջապահութեան նախարարութիւնը վաղուց դարձել է առողջաքայքայման նախարարութիւն: Երկու դարի առաջ մերձաւորներիցս մէկի 10 եւ 12 տարեկան երեխաները վարակուել էին քսոսով, ապրում են երեւանի Գարաւ-Արեւմտեան քաղաւաստում: Դարմանատնից տուն այցելած բժիշկը հրաքանչիւր երեխայի զննման համար պահանջել էր 1000 դրամ, որը չունէին: Երեխի հենց այդ պատճառով էլ բժիշկը ճշմանակում է ղեղի այնպիսի չափ, որը երեխաների մաշկն է վարում: Դրանից յետոյ մայրը երեխաներին տանում է Աջնիփեանի մաշկային հիւանդանոց, եւ հենց այստեղ էլ բժիշկը պարզում է օգտագործուած ղեղի սխալ չափը եւ միաժամանակ առաջարկում է իր «սեփական» ղեղը, թէ «ինչքան մ կը տաք այս շշիւն»: Բժիշկն առաջարկում է զոճէ 5000 դրամ տալ, բայց մայրը փող չունէր, եւ ղեղը չեն տալիս: Կինը ստիպուած դիմում է հեքիմային մեթոտով օրմ ժամ: Չէրի մէջ լուծում է աղացած ծծուձը եւ քունը երեխաների մաշկին: Նրանք, կարծես թէ, բուժուել են, քոյր այլեւս չունեն: Իսկ մեր լիտի չինովնիկները յայտարարում են, թէ արեւելեան 15 տարեկան երեխաների տնտնւմ անվճար է: Իրականում ղեղերի մեծ մասը, այդ թւում նաեւ քուփ դէմ, մարդասիրական օգնութիւն է, որ պէտք է նպատակին հասնի անվճար:

Նոյն պատկերն է բոլոր հիւանդանոցներում: Սօտ հինգ ամիս առաջ էլ Նորքի սուրվարակիչ հիւանդանոցում տողերին ետդինակի 3ամեայ որդու մօտ յայտնաբերուած աղիքային ծախիւր վնասազերծում համար բոլոր ղեղերի, այդ թւում երակային ներարկման կլիւբրոպին եւ ֆիզիլոպիական լուծոյթի համար վճարում էինք: Բուժքոյրերը կատարեցին բոլոր վճարումն էին 2000 դրամով, մինչդեռ ղեղատներում 600 դրամ է: Այս ամենին զումարած ճանե բժիշկների եւ բուժքոյրերի պահանջած ահռելի գումարները:

Ուսումնական գործընթացը մեր երկրում դարձել է մի իւրօրինակ «փորձ»: Գրեթէ բոլոր մանկապարտէզների, դպրոցների եւ նոյնիսկ քոլէժների ու համալսարանների ղեկավարները սեփական նախաձեռնութեամբ փորձեր են կատարում մեր երեխաների վրայ, որոնք միակ նպատակը ծնողներից փող կորզելն է: Մանկապարտիզային երեխաներ ունեցող ծնողները սկզբանք են յամախակի կազմակերպուող հանդեսների, կոնցիկային ներկայացումների, լուսանկարուելու եւ այլ նպատակների համար ստիպողական փողի աւարութեան առաջ: Իսկ դպրոցական երեխաների վրայ աւելանում են նաեւ անհասկանալի պարբերական փողահաւաքները: Երկրորդ դասարանում սովորող դուստրու երկու ամիս անընդհատ կրկնում էր, որ իրաքանչիւրից 5000 դրամ են ուզում, բայց թէ ինչի համար, ինքը չգիտէր: Իսկ մայրաքաղաքի կենտրոնի այդ դպրոցում մօտ 800 աշակերտ կայ, եւ կարելի է պատկերացնել հաւաքուող գումարի չափը: Այդ նոյն դպրոցում դասաժամը տեսում է 35 րոպէ, իսկ արձակուրդները երկարաժամուկ են: Դասավորութեան ներկայացումն իսկույն աւելորդ է: Թնութեան ներկայացած ուսանողին դասախօսը չի ծանաչում: Ուսման վարձը վճարել է, վերք, պէտք է աւարտի:

Գիւրատնտեսութեան նախարարութիւնը, որն աւելի ճիշդ կը լինէր անուանուէր հայգիւղքանդ նախարարութիւն, գիւրը մտաբերում է միայն հարկահաւաքութեան շրջագծում: Գիւղացին տկլորացել եւ սովամահ է լինում, հողը մնում է անտէր-անտիրական: Իսկ գիւղի քայքայումը արդէն երկրի քայքայում է:

Գազարաւոր ընտանիքներ թշուառութեան պատճառով հոսանքազրկուած են քրազրկուած են, բայց չի-նովնիկները կուլտ ու ինքնզոհ են: Իսկ երկրի դատարկուելը հող չէ, քանի որ թուրքիայում էլ դատարկուած հայկական գիւղերը դատարկ չենացին... Շուտով կլ վերջոյ կը բացուի թուրքիա - Գայաստան սահմանը, եւ այդ հարցը արագօրէն կը լուծուի:

Քաղաքականութիւնը պէտք է ծառայի երկրի բնկալութեան շահերին եւ անվտանգութեանը, բարձրացնի նրանց կենսամակարդակը եւ բարեկեցութիւնը, երջանկացնի մարդկանց եւ ապահովի առողջ սերնդափոխութիւն, իսկ եթէ այդ քաղաքականութիւնն իրենցում է ժողովրդի կենսակարգակալը, քայքայում մարդկանց առողջութիւնը, կրճատում անք, աղքատացնում ժողովրդին, թուլացնում մարդկանց հաւատը ապագայի հանդէպ, ապա այդ քաղաքականութիւնը սնանկ ու ազգասպաւ է, եւ դրա իրականացնողներն անյապաղ պէտք է հեռանան ասպարէզից:

ՎԵԱԶԵՍԼԱԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ «Նորաթերթ»

ԴԱՐԱՎԵՐՋԻ ՏԱՄՆԱՄԵԱԿ, ՀԱՅ ԴԱՏ ԵՒ ՅԱՐԱՎԻՑ ՄԱՐԶԵՐ (ՅԵՏԱԴԱՐՁ ԱԿԱՐԿ՝ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ) Ա.

ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. «Յեղափոխութեան Լոյսէ Գօտին», Վազգէն Շուշանեան Խմբագիր՝ Պօղոս Սնայեան, Պէյրուք, 1998
2. Լիպարիտ Նազարեանց, Կեանքն ու Ստեղծագործութիւնը խմբագրք. Ե. եւ Ս. Յակոբեաններ, Գահիրէ, Իրատ. «Յուսաբեր», 1991

Դայ քաղաքական գրականութեան 90ական տարիներու հունձքին վրայ յետադարձ ակնարկ մը դիւրաւ առիթ կու տայ հաստատելու, որ վերջին տասնամեակը, ինչպէս այլ մարզերու, ասոր մէջ ալ չի գիշեր նախորդներուն, որակով եւ քանակով:

Վերջին տարիներու քաղաքական վերիվայրումները չափով մը կը փոխեն գիտա-իրատարակչական արտադրութիւններու այդ պատկերը - չափով մը միայն: Նախ Սփիւռքի տարածքին: Գ. Յ. Դաշնակցութեան ու երկրորդաբար ազգային այլ ուժերու յանձնառու գիտողութիւններով, արտադրական շարժումը չէր կայսած երբեք: Ապա, խորիորդային սառցախալէն ասոդին, հեթոքական տուրքը կայսեր տալու եւ այս կամ այն չափով «շուրթերը պղծելու» պայմանով, հայրենի մտաւորակամութիւնը որոշ մասնակցութիւն կը բերէր անոր: Այսօր, այդ մասնակցութիւնը դարձած է անկաշկանդ, եւ կը վայելէ ազատօրէն տրամադրուող արխիւներու բարիքը նաեւ - միշտ մտաւորական - պկաղեմական կարողութիւններու սահմանին մէջ:

Ինչպէս ճշդուած էր կանխապէս, յետադարձ այլ ակնարկի մը պարագային, իրատարակչական հունձքի այս համապատկերը նոյնպէս մասնակի է, բնօրինակային ձգտող մնուչներու քննարկման ընդմէջէն: Շարք մը այս մարզի գործեր այս սիւնակագլուխին տակ գրականութեան են (1): Դոս քննարկման համար ընտրուած են տասնմեակի այն արտադրութիւններն քանի մը հատը, որոնց այս սիւնակագլուխը անդրադառնալու առիթ չէ ունեցած, կամ չէ ունեցած բաւարար չափով:

Իբր տիպական ենթատեսակներ, յաջորդաբար նկատի առնուած են
 Ա. Գրական - գաղափարական գործեր.
 Բ. Պատագրբեր Նոր - ժամանակակից հայոց պատմութեան:
 Գ. Գ. Յ. Դ. արխիւային նիւթեր
 Դ. Ազգագրական նիւթեր
 Ե. Պատմագրական նիւթեր
 Զ. Պատմագիտական նիւթեր
 * * *

Մշակութային բովանդակութիւնը, մշակութային յղոււմները միշտ ալ կազմած են գարափարական շարժումների վաւերականութեան ցուցանիշ, անոնց ազնուաբոլոր: Փաստը, որ այսպիսի յարակցութիւն մը անհամեմատ աւելի զօրէր է ազգային շարժումներու մէջ (անհամեմատ յորինակ կրօնական, կամ ընկերա-տնտեսական լիցքով շարժումներու), ոչինչ ունի զարմանալի, մշակոյթը ո՛րն է, եթէ ոչ եւկան, քանծրացական դրսեւորումը ազգային ինքնութեան, ազգային հաւաքական անհատականութեան, որ իբր մէկ այլ եական արտայայտութիւն ունի քաղաքական միութեան գիտակցութիւնը: Չույզ դրսեւորումներ օրկանապէս իրարու շարուած, իրար իմաստաւորող, ինչպէս, օրինակ անհատական - կենսաբանական մակարդակին, հոգեկան - մարմնական կրկնակ ու լրացուցիչ գոյք:

Նոյն այս յարակցութեան առկայութիւնը Գ. Յ. Դաշնակցութեան պարագային, նոյնպէս չի կարօտիր փաստարկումներու, թէկուզ պարզ մեկնաբանական լուսաբանութիւններու - այնքան բացայայտ է ու ծանօթ: Նախքան Դաշնակցութիւնը դաշնակցական Բաֆֆներէ ու Նալպանտեաններէ մինչեւ Ահարոնեան ու Չարդարեան, ու մինչեւ Կարուծան, մինչեւ Իսահակեան, մինչեւ Լեւոն Շանթ ու Ետայեան, եւ մինչեւ Բակունց ու Կոստան Ձարեան եւ Ձարեան. - այնքան նկատուած, մատնանշուած, քննարկուած են այդ յարակցութեան երկկողմանի, տրամաբանական զարգացումները - հանգրուաններն ու փուլերը:

Ուրեմն կարելի է գանց առնել անցեալի տեսլանքներու կրկնութիւնը, եւ անցնիլ ներկային: Դոս ողջունելու համար 90ական տարիներու երկու իրատարակութիւններ, որոնք կու գան վերականգնացնելու, ամբողջացնելու արդէն նուիրական, նուիրագործած երկու կենդանագիրներ - յաջորդաբար Վազգէն Շուշանեան եւ Լիպարիտ Նազարեանց:

«ՅԵՂԱՓՈՒՄՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԷ ԳՕՏԻՆ»

Այս հատորի խմբագիր բազմավաստակ զրագէտ Պօղոս Սնայեանի փութացած է հատորի մուրօքին ճշնել, թէ «Շուշանեան «Յեղափոխութեան Լոյսէ Գօտին» անուանով հատոր չունի... Ենթախորագիրներու տակ կատարուող խորիորդածնութիւններու տրուած ընդհանուր տիտղոս մըն է... որ հոս իբրեւ խորագիր կ'ընծայուի ռզեկան նոյն աշխարհէն բխած աւելի մեծ թիւով գրութիւններու, որոնց վրայ լոյս կը նետէ անիկա եւ մերթ լոյս կ'առնէ անոնց...» հատորը փակող «Մատենագիտութեան» տունակներով, զայն կազմող 28 գրութիւններն կ'ետ աւելին, ու ըստ բովանդակութեան առաւել կարելորդները, լոյս տեսած են յետ մահու 1940-է մինչեւ 1995:

Այս սիւնակագլուխը հետաքրքրող տեսանկիւնէն, կ'արժէ պահ մը յամենալ հանրային - քաղաքական առաւել լիցք ունեցող-միանգամայն են ամենէն արժեքաւոր... տասնեակ գրութիւններու վրայ, ինչպիսին են հատորը բացող «Յեղափոխութեան Լոյսէ Գօտին», «Փորձ Բորոյրելու Գ. Յ. Դաշնակցութեան Մշակութային Դերը», Պ. Ձարոյեանի եւ Չ. Որբունի ուղղութեան «Բաց Նամակ», «Դաշնակցական Տըղութեան», «Արուեստի մասին», «Բաց Նամակ Արտասահմանի Դայ Մտաւորականութեան», եթէ Ողջ է Դեռ», «ժամը հնչած է Արդար Մարտի», Օրագիրի հատուածը, եւ եզրափակիչ համառօտ բայց յոյճեման իհանալի «Մեր երկիրը»:

Այնքան ծուծ ու համ կայ բոլոր այս գրութիւններու էջերն ի վար, այնքան անգամներ, յատկապէս անցնելով 30ական արտադրութիւններու պարագային, Շուշանեան տիրականօրէն կը գանցէ, կը յաղթահարէ նախորդող տասնամեակի պատանելակ իր տագնապներն ու մենախտաւորի սահմանափակութիւնները... Մեկնաբանական ամբողջ հատոր մը շտա փոխել չըլլար վերը նշուած տասնեակ գրութիւններուն, որոնք կը ճանաչալթեն գաղափարական թռիչքով, կայտառ իմաստութեամբ թափանցումով:

Եթէ «Յեղափոխութեան Լոյսէ Գօտին»-ը, ու յատկապէս անոր առաջին մասին մէջ, Շուշանեան

եան անօրինակ շոյալութեամբ մը կ'ողջունէ «յեղափոխութեան յարուցած առիթընող ու մոգիչ ուժը», մեր «ամենէն անողոր մը ցուրտ գաղափարներու... ստորերկրայ թելերով... մեր գզացական ու յուզական էութեան հետ» պահած յարաբերութիւնը. կամ կ'ողեկոչէ, աւելի թանծրացականօրէն, «հայկական Բարձրաւանդակի չարաշուք մթութեան խորէն» յայտնուած «հերոսաց վարքը». կամ այդ հերոսներու «երկրորդ կեանքը» հարկադրաբար աշխարհասփիւռ դարձած հայ ու դաշնակցական երիտասարդութեան մը հոգիին մէջ. - ապա, Գ. Յ. Դաշնակցութեան մշակութային դերը բնորոշելու» կոչուած փորձին մէջ, այդ փորձին թելադրած յանելալը, պատասխանատու ճշգրտութեան իսկ բնուումով, ան աւելի կը սերմնէ, կը ճզգրտէ իր ոսպնեակը յանուն պատկերախանութեան առաւել յստակութեան: Ուզողի նշորհելու Գ. Յ. Դաշնակցութեան քաղաքական ու ընկերային գործունէութեան «վճի միւթ» դարձուիլը, կը հաստատէ զրեթ անկարելիութիւնը ուրանալու «թողուն ու ազուոյ դերը. որ ան ստանծմած է, որպէս մշակութային յառաքալակ ազգակ»: Ինչ որ նորագույն հայ մշակոյթի զարգացման ընթացքին մէջ կը ստեղծէ, Շուշանեանի իսկ բնորոշումով, «Գ. Յ. Դաշնակցութեան ստոր» եւ «Գ. Յ. Դաշնակցութեան օրով» պատմաշրջաններ: Դաշնակցութեան բերածը եական «տարբերութիւն» մը, «աւելի բան մը», որ սերտ առնչութիւնն է ժողովուրդէն մշակոյթը, որ ժողովուրդական, ժողովուրդէն եկող ու ժողովուրդի ու գաղող մշակոյթի նոր լիակցը է «ստեղծագործութեան, որոնումն էր աշխատանքի» մշակոյթի մը յղացքը:

